**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 16.10.2019թ.

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Ա. Ասատրյան
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, Գ. Ուստյան
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության գլխավոր մասնագետ Գ. Դավթյան
**Գնումների համակարգող՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Սահակյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

---

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին ***«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ», «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ»*** և ***«ՊՈՌ Ինվեստ»*** **ՍՊԸ**-ների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը՝ ապրանքի ամբողջական նկարագիրերը առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի պահանջներին, **«Էլեկտրոգրուփ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

10-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրում՝ ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է <հենակների> և <ծրագրային ապահովման> մասին տեղեկատվությունը:

18.10.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 3 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակցին ծտկել վերոնշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում **«Էլեկտրոգրուփ» ՍՊԸ-ն** շտկել է վերոնշված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 22.10.2019թ. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները

հանձնաժողովը որոշեց **մասնակիցների** որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ին, 7-րդ և 9-րդ չափաբաժիններում *«ԻՆՏ. ՍԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ»* ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնում «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին, 3-րդ և 8-րդ չափաբաժիններում «ՊՌՌ Ինվեստ» ՍՊԸ-ին և 10-րդ չափաբաժնում «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ին:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Վ. Սահակյան)

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Ա. Ասատրյան |
| Գնահատող | Կ. Պողոսյան |
| Գնահատող | Գ. Ռիստյան |
| Գնահատող | Գ. Դավթյան |
| Գնումների համակարգող՝ | Վ. Սահակյան |